

**«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ ներկայացվող ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները**

- ա) նախատեսվող գործունեության մասին հիմնական տվյալներ, մասնավորապես անվանումը, տեղադրման վայրը, նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը (առանձնահատկությունները), ծավալը, սկսելու և ավարտելու ժամկետները:
- բ) նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ հողատարածքի չափը, էներգիայի, ջրի և հումքի վերաբերյալ պահանջները:
- գ) տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համառոտ նկարագիրը:
- դ) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության հիմնական տվյալները, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության և վտանգավորության աստիճանը:
- ե) ազդակիր համայնքի որոշումը տվյալ վարչատարածքային միավորի զարգացման պլանին նախատեսվող գործունեության համապատասխանության մասին:
- զ) ազդակիր համայնքի որոշումը հողահատկացման մասին:
- է) համապատասխան պետական մարմնի կարծիքը, իսկ անհրաժեշտության դեպքում արտոնագիրը: